ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 12

17 փետրվարի 2012 թվական

ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ կետով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37 հոդվածի դրույթներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Քանի որ 2004 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 4 արձանագրության համաձայն նախկին «Լուսատեխնիկ» գործարանին պատկանող Գործարանային N 1 հասցեում գտնվող քիմիական պահեստը գնվել է Մարալիկ քաղաքի բնակիչ Սոս Ավետիսյանի կողմից և 30 դեկտեմբերի 2011 թվականի Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ճանաչվել է նրա սեփականությունը, ուստի նախկին քիմիական պահեստին հատկացնել 1200 քառակուսի մետր հողատարածք վարձակալությամբ սպասարկման նպատակով, պայմանով սեփականության իրավունքով, կառույցի օտարման դեպքում մուծելով գումար՝ տվյալ պահին գործող հողի կադաստրային արժեքի չափով:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.